

## 25.

### Ազատագրված տարածքների հարցը մարդու իրավունքների տեսանկյունից

#### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍՐՅԱՆ

Արցախի ազատագրված տարածքների հարցի բաղադրիչների համակցությունը չի կարող ամբողջական դիտվել, առանց մարդու իրավունքներին առնչվող գործոնների քննարկման: Այդ գործոններից ամենաէականը ժողովրդի ինքնորոշման իրավունքն է: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի գնահատմամբ, ժողովուրդների «ինքնորոշման իրավունքը առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ նրա իրականացումը էական պայման է մարդու անհատական իրավունքների երաշխավորման ու պահպանման և այդ իրավունքների խրախուսման ու զարգացման համար»<sup>1</sup>:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, լինելով մարդու իրավունքների համակցության կարևորագույն բաղկացուցիչ մաս, ամրագրված է ոչ միայն ՄԱԿ-ի կանոնադրություններով, այլև Մարդու իրավունքների միջազգային բիլլով՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրով, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրով (երկուստեղ էլ՝ հոդված 1) և մի ամբողջ շարք այլ միջազգային պայմանագրերով ու փաստաթղթերով:

Լինելով մարդու իրավունքների շարքում կարևորագույններից մեկը և գործնական դերակատարում ունենալով աշխարհաքաղաքական գործընթացներում՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը միաժամանակ լայնորեն և մշտապես շահարկվում և խեղաթյուրվում է շահագրգիռ պետությունների և միջպետական կազմակերպությունների կողմից:

Առավել ջանադրաբար կիրառվող խեղաթյուրումն այդ իրավունքի հակադրումն է պետությունների տարածքային ամբողջականությունից սկզբունքին: Իրավական տեսանկյունից հարցի դե-

տարկուժը ակնհայտ է դարձնում նման հակադրման հիմնազուրկ և հակաիրավական լինելը: Այս հարցը բազմիցս պարզաբանվել է տարբեր մասնագետների կողմից<sup>2</sup>: Այդ պատճառով, սույն հրապարակման շրջանակներում կանդորադառնանք Արցախի ազատագրված տարածքների հետ կապված այլ հարցերի:

Ազատագրված տարածքների խնդիրն արծարծելիս անհրաժեշտութուն է առաջանում սկսել սկզբից՝ 1921 թվականին Հայաստանի բռնի մասնատումից: Հիշենք, որ 1921 թվականի ընթացքում Մոսկվայի մարտի 16-ի, Կարսի հոկտեմբերի 13-ի պայմանագրերով և ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի որոշմամբ Արևելյան Հայաստանի տարածքների մեծ մասը բռնակցվեց Հարևան թյուրքական պետություններին՝ Թուրքիային և Ադրբեջանին<sup>3</sup>:

Արցախի բռնակցումն Ադրբեջանին իրականացվեց Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության կովկասյան բյուրոյի վերոհիշյալ պլենումի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ: Բռնակցումը կատարվել է ոչ միայն բնիկ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ակնհայտ խախտմամբ, այլև ուղեկցվել է մարդկության դեմ բազմաթիվ հանցագործություններով՝ զանգվածային կոտորածներով, սպանություններով, բնաջնջումներով, ազգային պատկանելությամբ պայամանավորված խտրականությամբ ու հալածանքներով, տարագրումով: Այս հանցագործությունները տարբեր զուգորդումներով շարունակվել են ընդհուպ մինչև Արցախի ազատագրումը<sup>4</sup>:

Ուշագրավ հանգամանք է նաև այն, որ Արցախի մարզի (ԼՂԻՄ) սահմանների որոշումը վերը նշված տիրահռչակ պլենումի որոշմամբ հանձնարարվել է Ադրբեջանի կուսակցական կազմակերպության կենտկոմին: Այսպիսով, այն տարածքները, որոնց շուրջ ներկայումս բանավեճեր են ծավալվում միջազգային զանազան ատյաններում, իրականում գոյացել են Հայաստանի և բուն Արցախի բռնի մասնատման հետևանքով: Այս տեսանկյունից՝ ստալինյան սահմանների ֆետիշացումը նշված ատյանների կողմից գուցե և արդարացվում է իրենց հայտնի քաղաքական շահերով ու շարժառիթներով, սակայն չի կարող խելամիտ և հիմնավորված համարվել իրավական ու բարոյական առումներով:

Ակնհայտ է, որ Արցախի բռնակցումը Ադրբեջանին ինչպես իր ձևով, այնպես էլ բովանդակությամբ, եղել է հակաիրավական՝

տարածքի բռնի փոխանցումը կատարվել է հակառակ բնիկ ժողովրդի կամքի, նրա ինքնորոշման իրավունքի բացահայտ ոտնահարմամբ և, իրավական առումով, իրենից ներկայացնում է բռնագավթում (անեքսիա): Նախկին ԼՂԻՄ-ի կազմում և նրա «սահմաններից» դուրս գտնվող Արցախի մյուս տարածքներն ունեն միևնույն կարգավիճակը՝ բոլորն էլ հակաիրավական միջոցներով բռնագավթված և հետագայում մասամբ ազատագրված տարածքներ են ու ներկայումս կազմում են Արցախի Հանրապետության անբաժանելի տարածքը:

Ադրբեջանի կողմից նշված տարածքները մի քանի տասնամյակ շարունակ բռնագավթված պահելը չի կարող իրավական գործոն հանդիսանալ այդ տարածքների նկատմամբ Ադրբեջանի նկրտումների հիմնավորման համար: Դեռևս Հայաստանի մասնատման ժամանակ, միջազգային իրավունքում գործում էր «Իրավունքի խախտումը չի ծնում իրավունք» սկզբունքը (*“Ex injuria non oritur jus”*): Այլ կերպ ասած, վաղեմությունը որևէ իրավունք չի ծնում, եթե իրավիճակը ստեղծվել է հակաիրավական գործողություններով: Ուստի հիմնագուրկ են նաև խորհրդային ժամանակաշրջանի վարչատարածքային բաժանումները կարգավորող փաստաթղթերին հղումներ կատարելու ադրբեջանական փորձերը՝ նախ Արցախի բռնակցումը ի սկզբանե եղել է հակաիրավական, երկրորդ, հենց խորհրդային իշխանությունն է եղել իրավունքի խախտման իրականացնողը և երրորդ, Ադրբեջանը, «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին» 1991թ. հոկտեմբերի 18-ի սահմանադրական ակտով իրեն հռչակում է ոչ թե խորհրդային Ադրբեջանի, այլ Ադրբեջանի առաջին հանրապետության (1918-1920) իրավահաջորդը, որի կազմում, ինչպես հայտնի է, Արցախը երբեք չի եղել:

Արցախի բռնագավթմամբ ժողովրդի ինքնորոշման իրավունքի 1921 թվականից ի վեր շարունակվող խախտմանը վերջ դրվեց միայն 1991 թվականին ԼՂՀ կայացմամբ և հետագայում Արցախի այլ տարածքների մի մասի ազատագրմամբ:

Ազատագրված տարածքների կրկին հանձնումը Ադրբեջանին կնշանակի ոչ այլ ինչ, քան մարդու իրավունքների խախտված նախկին իրավիճակի վերականգնում: Պետությունները պարտավորություն ունեն հարգելու մարդու իրավունքները և ձեռնպահ մնալու այդ իրավունքները խախտող գործողություններից: Ուս-

տի որևէ պետություն, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը, իրավասու չեն քննարկման առարկա դարձնել մարդու իրավունքների խախտում կատարելու հնարավորության կամ նպատակահարմարության որևէ հարց:

Ավելին, ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները, ՄԱԿ-ի կանոնադրության 55-րդ և 56-րդ հոդվածների ուժով պարտավոր են հարգել ժողովուրդների իրավահավասարությունը, նրանց ինքնորոշման իրավունքը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի համաձայն պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի բռնի գործողություններից, որոնք ժողովուրդներին զրկում են ինքնորոշման իրավունքից: Իսկ այս պարտավորությունը չկատարվելու դեպքում Հռչակագիրը ինքնորոշման ձգտող ժողովուրդներին վերապահում է այլ պետություններից օգնություն խնդրելու և ստանալու իրավունք: Բացի այդ, Հռչակագիրը մատնանշում է, որ «յուրաքանչյուր պետություն պարտավոր է աջակցել ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի և նրանց ինքնորոշման իրավունքի իրականացմանը»: Համանման պարտավորություններ են սահմանվում նաև Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրում:

Ինչպես Արցախի պետության կայացման, այնպես էլ Արցախի ազատագրված տարածքների շուրջ քննարկումներում այլ պետությունների կողմից, ժամանակ առ ժամանակ, չըջանառության մեջ է դրվում «կարգավորում առանց հաղթողների և պարտվողների» բանաձև-կարգախոսը, որը որևէ կերպ չի համապատասխանում խնդրո առարկայի իրական բովանդակությանը:

Ադրբեջանի մինի-կայսրությունը, Արցախի հանրապետության կայացման և բռնագավթված տարածքների մի մասի ազատագրման արդյունքում ընդամենը զրկվել է նախկինում իր բռնագավթած ու փաստացի գաղութացրած տարածքների մի մասից: Այդպիսի իրավիճակում Ադրբեջանին իբրև պարտված կողմ ներկայացնելն այդ երկրում սոսկ ծնում ու սնում է ուժանչիստական տրամադրություններ և Ադրբեջանին ավելի է հեռացնում խնդրի

*կարգավորումից: Գաղութներին անկախացումից հետո գաղութատեր պետությունը չի կարող դիտվել իբրև պարտված կողմ, քանի որ բռնազավթումներն ու գաղութացումներն ինքնին հակաիրավական են: Արևմտաեվրոպական պետությունները նախորդ տասնամյակների ընթացքում կորցնելով իրենց գաղութները, ամենևին էլ պարտվող կողմի չվերածվեցին և ոչ էլ ջանում են վերանվաճել անկախացած երկրների տարածքները:*

*Միայն միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա խնդիրներն իրապես լուծելով կարելի է հասնել տարածաշրջանում տևական խաղաղության հաստատմանը:*

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<sup>1</sup> United Nations Human Rights Committee, Text of General Comment 12, par. 1. “General Comments or Recommendations Adopted by United Nations Human Rights Treaty Bodies”, Volume 1, Raoul Wallenberg Institute, Lund, 2000, էջ 27:

<sup>2</sup> Տես մասնավորապես՝ Զ. Ասրյան «Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և Արցախի հիմնահարցը», «Օրենք և իրականություն» հանդես, թիվ 23-24 (61-62), 2002թ., էջ 3-4:

<sup>3</sup> Այս խնդրի շուրջ ավելի մանրամասն, տես մասնավորապես՝ Զ. Ասրյան «Արևելյան Հայաստանի բռնազավթված տարածքների հիմնախնդրի շուրջ», «Օրենք և իրականություն» հանդես, թիվ 1-2 (87-88), 2004թ., էջ 1-2:

<sup>4</sup> Այն հանգամանքը, որ մարդկության դեմ հանցագործություններից մարդու իրավունքների պաշտպանունը սովորության միջազգային իրավունքի խնդիրներից է, արձանագրվել է դեռևս 1945 թվականին Նյուրնբերգի Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրությամբ և հետագայում հաստատվել ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի բանաձևով (UNGA, Res 95 (1), GAOR UN Doc. A/64/Add. 1, էջ 188 (1946): Ներկայումս կարելի է վստահաբար պնդել, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կայացել է որպես միջազգային իրավունքի նոր համապարտադիր նորմ (jus cogens):